



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները Հայաստանում. խորհել, սովորել, նորարարել

Գիտաժողով

Քաղված դասեր

10 սեպտեմբերի 2021 թ.

Առաջարկություններ

- Իրավական քրջանակ.** Թեև ընտրությունների կազմակերպման և անցկացման ընդհանուր իրավական քրջանակը բավարար հիմք է ապահովում Վեներտիկի հանձնաժողովի՝ Ընտրական գործընթացներում բարեխիղճ գործելակերպի կանոնադրքին համապատասխան ազատ, արդար, թափանցիկ և վստահելի ընտրություններ անցկացնելու համար, խորհրդարանը պետք է զերծ մնա ընտրությունների օրվանից առնվազն մեկ տարի առաջ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելուց, որպեսզի հնարավորություն տա Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ), ֆաղափական կառավարություններին և թեկնածուներին արդյունավետորեն պատրաստվելու ընտրական գործընթացին, իսկ ընտրողներին՝ հասկանալու ընտրական համակարգը և փվեարկության կարգը: Քվեարկության կարգի փոփոխությունը, որը բացառում էր գրիչի օգտագործումը փվեարկության ընթացքում, ընդհանուր առմամբ, դրական է ընկալվել՝ պարզեցնելով փվեարթերթիկների հաշվարկի գործընթացը, ինչը նույնպես, ընդհանուր առմամբ, դրական է գնահատվել:
- Ընտրությունների կազմակերպում.** Ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերը, այդ թվում՝ միջազգային և տեղական դիտորդները, ընդունել են, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունները կազմակերպվել են արհեստավարժ և թափանցիկ կերպով:



Kingdom of the Netherlands



Հվերիա
Sverige



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Swiss Agency for Development
and Cooperation SDC

Funded by
UK Government





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- ա. **ԿԸՀ-ի կարողությունների ամրապնդում.** ԿԸՀ-ին պետք է հատկացնել բավարար ռեսուրսներ՝ իր մանդատն արդյունավետորեն իրականացնելու համար, քանի որ այն ունի բավարար կարողություններ և կամք՝ ռազմավարական մոտեցմամբ ընդլայնելու իր ինստիտուցիոնալ կարողությունները:
- բ. **Ընտրական գործընթացի մասնակիցների ուսուցում.** Ընտրական հանձնաժողովների անդամների և ընտրողների նույնականացման սարքերի (ԸՆՍ) օպերատորների համար անցկացված դասընթացներն արժանացել են ինչպես դասընթացների մասնակիցների, այնպես էլ վերջիններիս աշխատանքի շահառուների բարձր գնահատականին: Շահառուներն ընդունել են, որ ընտրական հանձնաժողովների անդամները և ԸՆՍ-ների օպերատորները եղել են լավ պատրաստված և իրենց պարտականությունները կատարել են առանց լուրջ ձախուղումների: ԿԸՀ ուսումնական և ռեսուրսային կենտրոնի կարողությունների զարգացումը կարող է նպաստել ընտրական գործընթացի մասնակիցների ուսուցման համակարգի հետագա ամրապնդմանը: Կենտրոնն առաջատար դեր կունենա ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի համար ուսումնական ծրագրեր կազմելու, ընտրական գործընթացի մասնակիցների ուսուցման ու հավաստագրման և ընտրական գործընթացի հավաստագրված մասնագետների բազա ստեղծելու գործում: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպված դասընթացները կնպաստեն դասընթացների և ֆինուրյունների ավելի բարձր որակին: Յուրաքանչյուր ընտրությունից առաջ ընտրական գործընթացի մասնակիցների գիտելիքները թարմացնելու նպատակով անցկացվող վերապատրաստումները պետք է շարունակական լինեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահները և ֆարտուղարները պետք է ստանան իրենց պարտականությունների գծով մասնագիտական ուսուցում: Ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել փվեարկության արդյունքների ամփոփման և փվեարթերիկների փաթեթավորման վրա, ինչի ընթացքում հանձնաժողովների անդամներն ամենամեծ դժվարությունների են բախվում:
- գ. **Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուների լիցենզավորում.** ԿԸՀ-ն պետք է սահմանի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուների գիտելիքների ստուգման և





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

լիցենզավորման ավելի խիստ ընթացակարգ, ինչը կապահովի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների աշխատանքի ավելի բարձր արդյունավետությունը:

- դ. **ԿԸՀ-ն պետք է ընդլայնի իր առցանց ուսուցման հնարավորությունները՝** ի լրումն առկա ուսուցման հնարավորությունների: Ընտրական հանձնաժողովների անդամների և ԸՆՍ օպերատորների առցանց դասընթացը հաջողությամբ ավարտելը կարող է առկա դասընթացներին մասնակցելու և հավաստագիր/լիցենզիա ստանալու նախապայման լինել: Պետք է մասնագիտական ուսուցման ծրագրեր մշակել բոլոր շահագրգիռ կողմերի՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, ֆաղափական կուսակցությունների վստահված անձանց, դիտորդների, դատավորների և ոստիկանների համար:

3. Ընտրական գործընթացներում տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառություն և կիրեռանվտանգություն

- ա. **ԿԸՀ-ի կայք և ընտրությունների կառավարման համակարգ.** ԿԸՀ-ի նոր գործարկված կայքը ժամանակակից և փոխներգործուն գործիք է, որը թույլ է տալիս ԿԸՀ-ին մատչելի ձևով տրամադրել համապարփակ, հեզգրիտ և թարմ տեղեկատվություն ընտրողներին և ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերին: Այս փաստն ընդունել են ինչպես միջազգային, այնպես էլ տեղական դիտորդները: Կայքի հետագա կատարելագործման նպատակով պետք է ներդրել նոր մոդուլներ, այդ թվում՝ ընտրական վեբերի լուծման, թեկնածուների, ֆաղափական կուսակցությունների, դիտորդների և լրագրողների գրանցման մոդուլներ, ինչպես նաև կատարել ընտրությունների կառավարման համակարգի տարրերի ֆայլ առ ֆայլ անցում աշխատասեղանային հարթակից (desktop platform) համացանցային հարթակ: Սա թույլ կտա ԿԸՀ-ին իրական ժամանակում տեղեկատվություն տրամադրել ընտրական բոլոր գործընթացների վերաբերյալ՝ խթանելով դրանց առավել թափանցիկությունը, ինչը կհանգեցնի ընտրողների վստահության մեծացմանը:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

- բ. **Ընտրողների գրանցում և նույնականացում.** ԸՆՍ-ների օգտագործմամբ ընտրողների էլեկտրոնային նույնականացումը թույլ է տվել ապահովել «Մեկ ընտրող, մեկ փվե» ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքը և զգալիորեն փոխել է ընտրական գործընթացի ընկալումը, ինչը շատ ընտրողների կողմից ճանաչվել է որպես ֆաղափակիչ գործընթաց և արժանացել ինչպես միջազգային, այնպես էլ տեղական դիտողների դրական գնահատականին: ԸՆՍ-ների պատշաճ սպասարկումը պետք է կրի շարունակական բնույթ՝ ապահովելու դրանց հետագա արդյունավետ օգտագործումն ընտրական հաջորդ շրջափուլում:
- գ. **Ընտրական գործընթացի հետագա թվայնացում.** Փոկուս խմբերի և խորհային հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերը գտնում են, որ առկա է ընտրական գործընթացներում ՏՀՏ-ի կիրառության ընդլայնման պահանջ: ԿԸՀ-ն կարող է դիտարկել ընտրական գործընթացի հետագա թվայնացման տարբերակները, այդ թվում՝ փվեարկության, փվեների հաշվարկի և ընտրությունների արդյունքների ամփոփման ժամանակ:
- դ. **Կիբեռանվտանգություն.** Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ԿԸՀ-ի կայքը և ՏՏ ենթակառուցվածքները ենթարկվել են զանգվածային հարձակման ընտրությունների գիշերը՝ նշանակալի ռիսկ ներկայացնելով արդար ընտրությունների անցկացման ընկալման համար: ԿԸՀ-ն պետք է ստանա բազմակողմանի աջակցություն՝ հաշվի առնելով կիբեռանվտանգային ռիսկերի նախնական գնահատման արդյունքները, որոնց հիման վրա պետք է վեր հանվեն սարքակազմերի և ծրագրակազմերի ձեռքբերման, ԿԸՀ-ի ՏՏ անձնակազմի ուսուցման, կիբեռանվտանգության արձանագրությունների մշակման և ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի՝ հատկապես ընտրական գործընթացի մասնակիցների համար կիբեռնիզիացիայի թեմայով ուսումնական ծրագրերի մշակման կարիքները:

4. Ընտրական վեճերի լուծում. Շարունակել ջանքերը դիմում-բողոքների բնույթի և վարչական վարույթների արդյունավետության և թափանցիկության բարձրացման առումով: Անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ծագած





ընտրական վեները՝ դրանց բնույթն ու պատճառները բացահայտելու, հետազոտում նաև կանխելու նպատակով:

5. Ընտրողների կրթություն

- ա. Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է ֆաղափացիական և ընտրողների համապարփակ կրթություն անցկացնել: Տեղեկության տրամադրման, հանրային իրազեկման և ներգրավման միջոցով ֆաղափացիական մասնակցության և ընտրական գործընթացների վերաբերյալ ընդհանուր պատկերացում ապահովելը կարող է նպաստել ֆաղափացիների և ընտրողների շփոթումն վստահության ձևավորմանը, ֆանի որ այն մեծացնում է քափանցիկությունն ու ներառականությունը: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում անհրաժեշտ է իրականացնել ֆաղափացիական և ընտրողների համապարփակ կրթության արժավներ՝ ֆաղափացիների և ընտրողների իրավունքների արդյունավետ իրացման համար պահանջվող գիտելիքներ, արժեքներ ու հմտություններ ձևավորելու և ֆաղափական բովանդակալից ակտիվության ու ընտրություններին մասնակցության հիմն ապահովելու նպատակով:
- բ. **Ընտրողների կրթության հետագա կազմակերպում.** Ընտրական շրջափուլերի միջև ընկած ժամանակահատվածում ԿԸՀ-ն բարձրացնում է ընտրողների կրթության մակարդակը՝ մշակելով տարբեր թիրախային լսարաններ և, որպես դրական գործելակերպ, ներգրավելով մասնագիտացված ՀԿ-ներ: Միևնույն ժամանակ, որոշ դիտարկների զեկույցներից և ընտրողների շրջանում անցկացված ֆոկուս խմբերի արդյունքներից պարզ է դարձել, որ ընտրողների կրթության խրախուսման արժավները բավականաչափ շոշափելի արդյունքներ չեն տվել: Ընտրական հետագա շրջափուլերում ԿԸՀ-ն պետք է ավելի շատ համագործակցի ֆաղափացիական հասարակության խմբերի հետ՝ ընտրողների կրթության հարցում:
- գ. **Ընտրողների կրթության կազմակերպման ուղիներ.** Քաղաքացիական և ընտրողների կրթությունը խթանելու համար կիրառվող գործիքները կհանդիսանան ժամանակակից զանգվածային լրատվամիջոցները, ինչպիսին են՝ համացանցային հեռուստատեսությունը/ռադիոն և կաբելային հեռուստատեսությունը/ռադիոն: Թեև հայ ընտրողների մեծամասնության համար հեռուստատեսությունը շարունակում է



Kingdom of the Netherlands



Ըվեդիա
Sverige



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Swiss Agency for Development
and Cooperation SDC



Funded by
UK Government





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

մնալ տեղեկատվության հիմնական աղբյուր, սոցիալական ցանցերի առավել լայն կիրառությունը, հատկապես երիտասարդ սերնդի շրջանում, առաջացնում է ֆաղափարակալի և ընտրողների կրթության կազմակերպման նպատակով սոցիալական ցանցերի կիրառության հետագա ընդլայնման պահանջ: ԿԸՀ-ն պետք է դիտարկի ընտրողների կրթության առկա ձևաչափով միջոցառումների շրջանակն ընդլայնելու հնարավորությունը:

5. Ընտրական գործընթացի մատչելիություն

ա. Միջազգային և տեղական դիտարկների գեկույցներից, ինչպես նաև ընտրողների, ընտրական հանձնաժողովների անդամների և ֆաղափարակալ կուսակցությունների ներկայացուցիչների շրջանում անցկացված ֆոկուս խմբերի և խորհային հարցազրույցների արդյունքներից պարզ է դարձել, որ առկա է ընտրատեղամասերի մատչելիության ցածր մակարդակ և հաճախումները ունեցող ընտրողների համար փյուռքային մասնակցելու այլընտրանքային սահմանափակ հնարավորություններ: Իշխանությունները պետք է ջանքեր գործադրեն՝ ընտրական տեղամասերի ֆիզիկական մատչելիությունն ապահովելու համար, ինչպես նաև կարող են դիտարկել սահմանափակ հենաշարժողական խնդիրներ ունեցող բոլոր ընտրողների համար շրջիկ արկղի միջոցով փյուռքային ձևաչափի ընդլայնման և ԿԸՀ-ի կայուն մատչելի ընտրատեղամասերի փոխներգործուն (ինտերակտիվ) ֆարտեզի ներդրման հնարավորությունը՝ հաճախումները ունեցող ընտրողներին ընձեռելով մատչելի ընտրատեղամաս ընտրելու հնարավորություն:

6. Ընտրական գործընթացի ներառականություն

ա. **Կանանց մասնակցություն.** Կանայք ազատի մասնակցություն են ունեցել արտահերթ խորհրդարանական ընտրություններին՝ կազմելով ընտրություններին մասնակցածների 54.45 տոկոսը: Որպես պատգամավոր ընտրված կանանց թիվը նախորդ խորհրդարանական ընտրություններին ընտրված կանանց թվի համեմատ անել է 10 տոկոսով՝ 24.24 տոկոսից հասնելով 34.58 տոկոսի, շարունակելով գեղդերային հավասարության դրական դինամիկան: Ցավոք, կանայք շարունակում են





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

թերներկայացված լինել տեղական մակարդակում՝ կազմելով տեղական խորհուրդների անդամների ընդամենը 10 տոկոսը, ինչ հետագա ջանքեր է պահանջում բոլոր մակարդակներում կանանց և տղամարդկանց հավասարության հասնելու համար:

բ. **Երիտասարդների մասնակցություն.** Ընտրացուցակներում ընդգրկված 18-34 տարեկան 723,728 ընտրողներից ընտրություններին մասնակցել է 335,845 ընտրող՝ կազմելով փվեարկության մասնակցողների 46.40 տոկոսը, ինչն ընդգծում է երիտասարդների ֆաղափացիական ակտիվությունը խթանելու անհրաժեշտությունը:

գ. **Ազգային փոփրամասնությունների մասնակցություն.** Ողջունելի են ընտրություններին մասնակցող թեկնածուների մասին ազգային փոփրամասնությունների մայրենի լեզվով կրթական նյութեր և տեղեկություններ տրամադրելու՝ ԿԸՀ-ի գովելի ջանքերը: ԿԸՀ-ն պետք է շարունակի ազգային փոփրամասնություններ ներկայացնող ընտրողներին տրամադրել ընտրական գործընթացների մասին առավել ընդգրկուն տեղեկություններ՝ նպաստելով նրանց ավելի լավ ինտեգրմանը և ֆաղափացիական ակտիվ մասնակցությանը:

7. Ընտրական գործընթացներում ՔՈՎԻԴ-19 համավարակի տարածման կանխարգելում

ա. Արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ի ձեռնարկած՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի տարածման կանխարգելիչ միջոցառումները լավ են ընկալվել ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի կողմից՝ վստահություն ներշնչելով ընտրական գործընթացի անվտանգ լինելու նկատմամբ և ընտրական գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերին ընծեռելով ընտրությունների օրը փվեարկելու կամ իրենց պարտականությունները կատարելու հնարավորություն՝ առանց վարակվելու մտավախության: Որպես արդյունք՝ ընտրություններին հաջորդող 14-րդ օրը գրանցվել է վարակվածության ընդամենը 55 նոր դեպք, ինչը վկայում է այն մասին, որ ընտրական գործընթացը որևէ կերպ չի նպաստել համավարակի հետագա տարածմանը: Միևնույն ժամանակ, դիտորդները մատնանշել են համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անվտանգության կանոնների խախտման դեպքեր, ինչն առաջացնում է ընտրողների կրթության խրախուսմանն ուղղված իրազեկման լրացուցիչ արժանիքների անցկացման անհրաժեշտություն՝





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՔՈՎԻԴ-19 համավարակի շարունակվելու դեպքում նպաստելու համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անվտանգության կանոնների պահպանմանը:



Kingdom of the Netherlands



Շվեդիա
Sverige



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Swiss Agency for Development
and Cooperation SDC



Funded by
UK Government

